ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի եւ Վրաստանի Խորհրդարանի միջեւ միջխորհրդարանային համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը եւ Վրաստանի Խորհրդարանը, այսուհետ Կողմեր.

-տալով կարեւոր նշանակություն Հայաստանի եւ Վրաստանի արյան բարեկամության ավանդույթներին, փոխըմբռնմանն ու սերտ համագործակցությանը, հիմնվելով բարիդրացիության, միմյանց իրավունքները եւ շահերը հարգելու սկզբունքների վրա,

-ընդգծելով Հայաստանի Հանրապետության եւ Վրաստանի միջեւ առանձնահատուկ փոխհարաբերությունների հատուկ կարգավիճակը եւ պատմական ժառանգորդությունը,

-ղեկավարվելով միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներով եւ նորմերով,

-հավաստելով իրենց ձգտումը համակողմանի համագործակցության հետագա խորացմանը՝ ուղղված միջխորհրդարանային կապերի զարգացմանը, օրենսդրական գործունեության համակարգմանը, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բնագավառներում ազգային օրենսդրությունների մերձեցմանը եւ իրենց նվիրվածությունը պառլամենտարիզմին՝ որպես ինքնիշխան պետությունների զարգացման ժողովրդավարական հիմքի,

-ընդունելով երկու պետությունների խորհրդարանային հանձնախմբերի եւ հանձնաժողովների, ինչպես նաեւ խորհրդարանների աշխատակազմերի միջեւ փոխգործողության կարեւորությունը,

-հիմք ընդունելով եւ զարգացնելով 1993 թվականի մայիսի 19-ի Հայաստանի Հանրապետության եւ Վրաստանի Հանրապետության միջեւ կնքված բարեկամության, համագործակցության եւ փոխադարձ անվտանգության մասին Պայմանագրի, 1993 թվականի մայիսի 19-ի Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի եւ Վրաստանի Խորհրդարանի միջեւ կնքված Համաձայնագրի դրույթները եւ 1997 թվականի փետրվարի 21-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի եւ Վրաստանի Խորհրդարանի միջեւ կայացած հանդիպման արդյունքների կոմյունիկեի ոգով,

համաձայնվեցին հետեւյալի մասին.

Հոդված 1. Կողմերը պարտավորվում են օժանդակել Հայաստանի Հանրապետության եւ Վրաստանի միջխորհրդարանային համագործակցության զարգացմանը՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող քաղաքական, սոցիալ-տնտեսական, մարդասիրական եւ այլ ոլորտներում իրավահավասար հարաբերությունների հետագա խորացման իրավապայմանագրային հիմքերի ստեղծման նպատակներով:

Հոդված 2. Կողմերը պատրաստակամություն են հայտնում տեղեկատվության կանոնավոր փոխանակմանը՝ երկու խորհրդարանների ընթացիկ օրենսդրական գործունեության, խորհրդարանային ծառայությունների տրամադրած տեղեկատվական բազաների միասնական նախապատրաստման մասին, նպաստել Հայաստանի Հանրապետության եւ Վրաստանի միջեւ կնքված պայմանագրերի եւ համաձայնագրերի վավերականացման գործընթացի համաժամանակեցմանը:

Հոդված 3. Ձգտելով նպաստել տարածքային համագործակցության զարգացմանը եւ տարածաշրջանում օրենսդրական համատեղելի դաշտի ստեղծմանը, օժանդակել օրենսդրության ներդաշնեկեցմանը՝ առաջնային համարելով հարկային, մաքսային, տրանսպորտի եւ էներգետիկ քաղաքականության բնագավառները:

Հոդված 4. Կողմերի փոխգործողությունների կազմակերպումը եւ համակարգումն իրականացնում է Վրաստանի Խորհրդարանի եւ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համագործակցության գծով մշտապես գործող հանձնաժողովը (այսուհետ՝

Միջխորհրդարանային հանձնաժողով)՝ կազմված Կողմերի ներակայացուցիչներից: Միջխորհրդարանային հանձնաժողովի գործունեությունը համակարգում են համանախագահները: Միջխորհրդարանային հանձնաժողովի համանախագահների թեկնածությունները եւ Կողմերի ներկայացուցիչներին հաստատում է յուրաքանչյուր Կողմ՝ իրենց ներքին կանոններին եւ ընթացակարգին համապատասխան:

Հոդված 5. Միջխորհրդարանային հանձնաժողովի աշխատանքի կազմակերպման կարգը որոշվում է Միջխորհրդարանային հանձնաժողովի հաստատած Կանոնակարգով եւ այլ ակտերով:

Հոդված 6. Միջխորհրդարանային հանձնաժողովը օժանդակում է համագործակցության բոլոր ոլորտներում երկկողմանի միջպետական հարաբերությունների, շփումների, խորհրդատվությունների եւ տեղեկատվության փոխանակման զարգացմանը, ինչպես նաեւ փոխադարձ հետաքրքրություն ներակայացնող հիմնահարցերի շուրջ Կողմերի դիրքորոշումների համաձայնեցմանը:

Հոդված 7. Միջխորհրդարանային հանձնաժողովը, Կողմերի միջպետական եւ միջխորհրդարանային հարաբերությունների եւ դրանց հետագա ընդլայնման հեռանկարների վերլուծության հիման վրա, կազմակերպում է փոխադարձ հետաքրքրություն ներակայացնող իրավական կարգավորման բնագավառների ազգային օրենսդրությունների մերձեցման առնչությամբ Կողմերի օրենսդրական գործունեության եւ ջանքերի համակարգում, երկու պետությունների խորհրդարանների եւ դրանց մարմինների համատեղ համագործակցության բոլոր ոլորտների համար առաջարկությունների եւ հանձնարարականների նախապատրաստում:

Հոդված 8. Կողմերը պատրատսկամություն են հայտնում օժանդակելու երկու պետությունների օրենսդրական իշխանությունների մարմիններին կից գործող գիտական հաստատությունների մշտական կապերի հպաստատմանը, փորձագետներ ուղարկել օրենսդրական ակտերի ուսումնասիրման ու մշակման եւ խորհրդարանական գործունեության փորձի փոխանակման համար:

Հոդված 9. Կողմերը սույն Համաձայնագրում փոխադարձ պայմանավորվածությամբ կարող են կատարել փոփոխություններ եւ լրացումներ:

Հոդված 10. Տարաձայնությունը սույն Համաձայնագրի կիրարկման կամ մեկնման վերաբերյալ թույլատրվում է Կողմերի համաձայնությամբ՝ բանակցությունների, փոխադարձ խորհրդատվությունների կամ այլ միջոցներով:

Հոդված 11. Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 1993 թվականի մայիսի 19-ի Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի եւ Վրաստանի Խորհրդարանի միջխորհրդարանային համագործակցության մասին Համաձայնագիրը դադարեցնում է իր գործողությունը:

Հոդված 12. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում իր ստորագրման օրվանից եւ յուրաքանչյուր Կողմի համար գործում է մինչեւ մյուս Կողմից ուղարկված՝ դրա գործունեությունը դադարեցնելու իր մտադրության մասին գրավոր ծանուցագրի ամսաթվից մինչեւ վեց ամիսը լրանալու պահը:

Կատարված է մայիսի 1 1998թ. երկու օրինակից, յուրաքանչյուրը՝ հայերեն եւ վրացերեն, ընդ որում, երկու բնագրերն էլ համազոր են:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ՝	ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ՝
ԽՈՍՐՈՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	ՉՈՒՐԱԲ ԺՎԱՆԻԱ